



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 սեպտեմբերի 2011 թվական N 358-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով և 145-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղական համայնքի ղեկավարի հերթական ընտրություն 2011 թվականի հոկտեմբերի 23-ին:

2. Առաջարկել թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղական համայնքի ղեկավարին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղական համայնքի նորընտիր ղեկավարին, որ իր պաշտոնը ստանձնում է 2011 թվականի նոյեմբերի 29-ին, այն ամրագրելով որոշմամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա. Հակոբյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ